

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԵՂԵԼ Է ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

06.03.2025 17:44



ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Պալատի նախագահի միջազգային հարաբերությունների և ԵՄ համագործակցության գծով խորհրդական Մարտուն Փանոսյանը 2025թ. փետրվարի 26-ից հինգ աշխատանքային օրով գտնվել են Ավստրիայում, մասնակցել Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) PECO կոմիտեի նիստին, որտեղ Հայաստանի փաստաբանների պալատը հանդես էր գալիս որպես զեկուցող՝ Հայաստանում հարկային փոփոխությունների արդյունքում փաստաբանական ծառայությունների հարկերի բարձրացման, անվճար իրավաբանական օգնության հարկման և այլ խնդիրների շուրջ:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկա է գտնվել Եվրոպայի Փաստաբանների պալատների նախագահների 53-րդ կոնֆերանսին, որի շրջանակներում հանդիպումներ և քննարկումներ է ունեցել մի շարք երկրների Փաստաբանների պալատների և Փաստաբանական միությունների նախագահների հետ: Աշխատանքային այցի շրջանակներում Սիմոն Բաբայանը հանդիպում է ունեցել նաև CCBE -ի ղեկավար Թիերի Վիքերսի և Ավստրիայի փաստաբանների պալատի նախագահ Արմենակ Ութուլյանի հետ:



Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })